ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
N 181 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Երևան, Ա. Բաբաջանյան 4 Հեռ. (37410) 72 98 24

24.11.2017թ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱՆԴԱՄ Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անանյան,

Ի կատարումն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 17/11/2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/42 որոշման հայտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից 20.11.2017թ հրավիրվել է նիստ, որի ընթացքում համաձայն խորհրդի որոշման վերանայվել են գնահատող հանձնաժողովի որոշումները, այնուհետև 21.11.2017թ. հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից «ՖԻՐՄԱ ԱԼՖԱ» ՍՊԸ-ին առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Վերջինիս կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացվել սահմանված ժամկետում, սակայն տեխնիկական բնութագրում տեղ են գտել հրավերի պահանջներին չհամապատասխանող տվյալ, ինչից ելնելով հանձնաժողովի կողմից 24.11.2017թ առաջարկվել է «ՖԻՐՄԱ ԱԼՖԱ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Կից Ձեզ է ներկայացվում գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության և համապատասխան ծանուցումների պատճենները:

ՏՆՕՐԵՆ՝ Լ. ԱՐԵՅԱՆ